



ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

2015_2018 թ.

ՎԱՆԱԶՈՐ

2015

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի պետական համալսարանի կենսաբանության ամբիոնի առաքելությունն է պատրաստել խորը գիտելիքներով օժտված, ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր, մի շարք մասնագիտությունների գծով (կենսաբանություն, աշխարհագրություն, դեղագործական քիմիա, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա) ուժեր կկազմեն ազգային կրթական համակարգի և գիտելիքահենք հասարակության մաս, կբավարարեն աշխատաշուկայի մշտանորոգ պահանջները, և իբրև խորը գիտելիքներով օժտված ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղությունները. պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորել ուսանողակենտրոն միջավայր. իրականացնել հետևյալ առաքելություններ.

1. Նպաստել ապագա կենսաբան- մասնագետների մոտ մարդ-քաղաքացու, կրթության և դաստիարակության խնդիրների, ժամանակակից մեթոդների ձևավորմանը:
2. Աջակցել արհեստավարժ, մասնագիտորեն և սոցիալապես ինքնահաստատված քաղաքացու ձևավորմանը, որը ի գործու է ակտիվ մասնակցություն ունենալու կյանքի տարբեր բնագավառներում ռազմավարական խնդիրների լուծմանը և ամենակարևորը ժողովրդավարական հասարակական կարգերի ամրագրմանը:
3. Ապահովել կենսաբանության մասնագիտության առարկայական ծրագրերի որակի բարձրացում, առաջնորդվելով Բոլոնյան գործընթացի հիմնական դրույթներով, որոնք արտահայտված են ՎՊՀ-ի ռազմավարական ծրագրերում:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

1. Կրթական

1. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի շրջանավարտներին կենսաբանության բնագավառում մրցունակ, պրակտիկ մասնագետներ դառնալու հնարավորություն ապահովող ՄԿԾ-ների մշակում և ներդրում:

2. Կենսաբանաքիմիական ֆակուլտետի < Կենսաբանություն > մասնագիտության ուսանողների մոտ ձևավորել մասնագիտության արժևորման և հատուկ գիտելիքների ձեռք բեռման, կենսաբանության տեսության ընդհանուր օրինաչափությունների, հիմնական հասկացությունների, խնդիրների, միջոցների և դասավանդման մեթոդների մասին մասնագիտության նկատմամբ պատասխանատվություն :

3. Այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների հատկապես քիմիայի, աշխարհագրության ՄԿԾ - ների շրջանակում նախատեսված բազմակողմանի զարգացած, պատշաճ մակարդակ ունեցող, գրագետ մասնագետների պատրաստման իրականացում:

4. Ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման մշակում և ներդրում:

5. Առարկայական ծրագրի թեմաների դասավանդման ժամանակ պարապմունքների պլանավորումը նոր մեթոդների կիրառմամբ :

6. Ապահովել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում:

2. Գիտահետազոտական

1. Ակադեմիական գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների և տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների ու հանրության հետ ամբիոնի գիտական համագործակցության շրջանակների ընդլայնում:

2. Կենսաբանության ամբիոնի հեղինակության բարձրացում ներքին և արտաքին միջավայրում՝ իր կայուն տեղը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում պահպանելու և ամրապնդելու միջոցով, միաժամանակ ինտեգրվելով միջազգային կրթական համակարգի մեջ:

3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականության մշակում և մասնագիտական աճին նպաստող որակավորման դասընթացների կազմակերպում:

4. Սովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում: Ամբիոնի մեթոդաբանության մեջ արմատավորել թյունինգ մեթոդաբանությունը;

5. Ապահովել ամբիոնի աշխատակիցների մասնակցությունը հանրապետության գործող գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների անդամակցումը:

Կենսաբանության ամբիոնը գործընթացը կազմակերպվելու է հետևյալ հայեցակարգերի սկզբունքների հիման վրա՝

- Վերակառուցել դասավանդումը, ցուցաբերել կոմպետենցիաների վրա հիմնված ուսանողակենտրոն մոտեցում:
- Կատարելագործել / Վերակառուցել / կենսաբանության կրթական ծրագրերը:
- Համապատասխանեցնել կենսաբանության կրթական ծրագրերը շուկայական պահանջներին և սոցիալական կարիքներին, հետազոտական աշխատանքներում ներառել պրակտիկ և կիրառական խնդիրներ լուծող թեմաներ
- Ճիշտ ինտեգրել գիտությունը և կրթությունը
- Ներդնել կրթության որակի ապահովման նոր տեխնոլոգիաներ
- Կենսաբանության ամբիոնը համալրել նոր սարքավորումներով և գործիքներով, հնարավորինս իրականացնել դասավանդվող բոլոր առարկաների լաբորատոր-գործնական աշխատանքները կատարելագործել լաբորատոր գործնական աշխատանքների բացատրականները: Ավելի առարկայական դարձնել ուսանողների ինքնուրույն աշխատանքների խնդիրները:
- Թարմացնել և կիրառել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոն գործընթացը:
- Հարստացնել և ուսանողների համար թափանցիկ դարձնել արտադրական, ուսումնական, գիտամեթոդական և գիտահետազոտական պրակտիկաների ծրագրերը: Արտադրական պրակտիկայի ժամանակ կատարելագործել արտալսարանային աշխատանքներ՝ պատի թերթերի հրատարակում, մրցույթների կազմակերպում և այլն:
- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ առաջնորդվել նրանց արդիականության պրակտիկ խնդիրներով:
- Ամբիոնում կատարելագործել ամենամյա ՈՒԳ աշխատանքները՝ ապահովել ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջազգային ՈՒԳԸ կոնֆերանսներին:
- Հստակ աշխատանք տանել ամբիոնի դասախոսների երիտասարդացմանը որակական խնդիրներին: Մինչև 2018 թ. ամբիոնում պատրաստել գիտության մեկ թեկնածու և ձևակերպել մեկ դոկտորանտ:

- Ապահովել ամբիոնի դասախոսների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին: 2015-2018 թթ.ամբիոնի դասախոսների ուժերով հրատարակել գիտական հոդվածներ և թեզիսներ, բուհական ձեռնարկներ:

Կենսաբանության ամբիոնում ձևակերպել հայցորդ:

3. Սոցիալ-դաստիարակչական աշխատանքներ

- . կենսաբանության տնտեսական հիմնավորում
- .տնտեսական- քաղաքական դաստիարակության ապահովում
- . ռազմահայրենասիրական դաստիարակություն

4.Որակի ապահովում

1. Որակի մշակույթի ձևավորում և դրա ապահովմանն ուղղված որակի ներքին համակարգի կազմավորում և գործառնության նորմավորում:
2. Կենսաբանության ամբիոնի ազգային, մշակութային բնագավառի՝ աշխատաշուկայի պահանջներին համարժեք մասնագետների պատրաստում :
3. Ուսուցման գործընթացի համակողմանի վերլուծության իրականացում և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգի ձևավորում:
4. ՈԱ մի շարք ընթացակարգերի կիրառում, որոնք միտված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:

4.Արտաքին կապեր և միջազգայնացում

Հաշվի առնելով կրթական ոլորտում ներկայիս իրականացվող բարեփոխումները և մասնագիտությունների ներդրման անհրաժեշտությունը՝ ամբիոնը արտաքին կապերի և միջազգայնացման նպատակով պետք է իրականացնի ազգային հեղինակավոր բուհերի արտերկրի և Ռուսաստանի Դաշնության առաջատար բուհերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ մասնագիտությունների հետագա կայացման ընթացքն ապահովելու, ինչպես նաև իրականացվող հետազոտական աշխատանքները համակարգելու և դրանք շահառուների կարիքներին ծառայեցնելու նպատակով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

| Նպատակներ | Ցուցանիշներ (միջոցառումներ) | Համագործակցություն | Կատարման ժամկետը |
|---|---|--------------------|-----------------------------------|
| Նպատակը | | | 2015-18 – ուստարի |
| 1.Մասնագիտության նոր կրթական ծրագրի կազմում և վերանայում | 1. Մասնագիտության կրթական ծրագրի կազմում և վերանայում՝ գործնական բաղադրիչի ավելացմամբ. ծրագրերի | ՈԱԿ | 2015-18 - ուստարի Կենսաբանություն |

| | | | |
|--|---|-----------------------|---|
| | <p>կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ համաեվրոպական համակարգին համադրելի դառնալու համար:</p> <p>2. Առարկայական ծրագրերի և դրանց Կրթական վերջնարդյունքների վերանայում՝ մասնագիտության կրթական ծրագրին համապատասխան</p> <p>3. Վերջնարդյունքներին համապատասխան Լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում և ներդրում</p> | | |
| <p>2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ</p> | <p>1. Ամբիոնի դասախոսական անձնակազմի համալրում՝ որակյալ գիտական և պրակտիկ կադրերով</p> <p>2. Միջբուհական, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում դասախոսների վերապատրաստման ծրագրերի իրականացում</p> <p>3. Դասավանդողների համար մասնագիտական օտար լեզվի, համակարգչային հմտությունների, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և իրավագիտության (աշխատանքային օրենսգիրք) վերապատրաստման ծրագրերի իրականացում:</p> | <p>Քիմիայի ամբիոն</p> | <p>2015-18 – ուստարի ամբիոնի վարիչ և անդամներ</p> |
| <p>Դասավանդման գործընթացի կատարելագործում</p> | <p>1. Դասավանդման ժամանակակից՝ տեղեկատվական, հոգեբանական և այլ մեթոդների կիրառման համալիր ծրագրի մշակում և ներդրում,</p> <p>2. Կենսաբանության ԿԾ-ի շրջանակներում միջառարկայական դասընթացների / capstone courses/ ներդրում,</p> <p>3. Գործնական հմտությունների զարգացման նպատակով ուսանողների՝ փոքր խմբերով ուսուցման գործնական ծրագրի մշակում և իրականացում</p> <p>6. Ուսանողների ներգրավում արտալսարանային</p> | <p>Քիմիայի ամբիոն</p> | <p>2015-18 – ուստարի ամբիոնի վարիչ և անդամներ</p> |

| | | | |
|---|--|---|--|
| | <p>պրակտիկ գիտահետազոտական ծրագրերում</p> | | |
| <p>Ուսանողների աշխատանքի հնարավորությունների ստեղծում</p> | <p>1. Պատվիրատուի հետ կապի սերտացում և համատեղ ծրագրերի իրականացում: 2. ուսումնարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում և պրակտիկական իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ պրակտիկայի ուսումնամեթոդական բազայի վերանայում: Շուկայական հարաբերությունների ներդրում :</p> | <p>Գիտության և արտաքին կապերի բաժին</p> | <p>2015-18 - ուստարի ամբիոնի վարիչ և դասախոսներ</p> |
| <p>Դասախոսների գիտահետազոտական գործունեության ակտիվացում</p> | <p>1. Մասնագիտական թեմաներով ներֆակուլտետային, միջֆակուլտետային հանդիպում-քննարկումների կազմակերպում /գիտագործնական սեմինարներ, Գիտական զեկուցումներ և այլն/ 2 .Աջակցություն միջազգային գիտական համագործակցության ծրագրերին /հետազոտական դրամաշնորհներ, Դրամաշնորհայի նծրագրեր, միջբուհական և միջազգային գիտաժողովներ/:միջբուհական, հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում և աջակցություն մասնակցություն հանրապետությունում և արտերկրում հրավիրվող հեղինակավոր գիտաժողովներին մասնակցելու ծրագրերին:</p> | <p>Գիտության և արտաքին կապերի բաժին</p> | <p>2015-18 – ուստարի ամբիոնի վարիչ և դասախոսներ</p> |
| <p>Ուսանողների գիտահետազոտական գործունեության ակտիվացում</p> | <p>1. Ամբիոնին կից ուսանողական գիտական ընկերության գիտական խորհրդի աշխատանքի կատարելագործում, 2. Դասախոսների և ուսանողների համատեղ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, Գիտական հոդվածների հրատարակում, ուսանողական գիտաժողովների կազմակերպում: 3. ֆակուլտետի ուսանողների և</p> | <p>Գիտության և արտաքին Կապերի բաժին</p> | <p>2015-18ուս տարի Կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ամբիոնի վարիչ</p> |

| | | | |
|---|--|-----------------------|--|
| | <p>Համալսարանի հենակետային վարժարանի բարձր Դասարանների աշակերտների միջև Համատեղ գիտակրթական Միջոցառումների իրականացում</p> | | |
| <p>Սոցիալ-դաստիարակչական աշխատանքներ</p> | <p>Նախապատրաստական դասընթացներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: Մասնագիտական խմբերի ձևավորումը, կենսաբանության իմացության ցածր մակարդակի բարելավում:</p> | <p>Քիմիայի ամբիոն</p> | <p>2015-18ուս տարի Կենսաբանության ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ</p> |

Կենսաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝

Լ.Ե.Բայրամյան

14.11.2018թ